# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## ՈՐՈՇՈՒՄ N 14

24 հունվարի 2020 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՔՍԿԱՎԱՏՈՐ-ԲԵՌՆԻՉԸ ԵՎ ՄԱԶ-555102-223 ԻՆՔՆԱԹԱՓ ԲԵՌՆԱՏԱՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բնակչության կողմից Անի համայնքի սեփականություն հանդիսացող GEHL BL 8185 MANITOU GROUP էքսկավատոր-բեռնիչը և ՄԱԶ-555102-223 ինքնաթափ բեռնատարը համայնքի բնակչության կարիքների համար օգտագործելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող GEHL BL 8185 MANITOU GROUP էքսկավատոր-բեռնիչը և ՄԱԶ-555102-223 ինքնաթափ բեռնատարը համայնքային ծրագրերը կատարելուց հետո լրացուցիչ ժամանակի դեպքում վճարովի հիմունքով հնարավորություն տալ օգտագործել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բնակչության կարիքների համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող GEHL BL 8185 MANITOU GROUP էքսկավատոր-բեռնիչի մեկ ժամ աշխատելու վճարը համայնքային բյուջեի համապատասխան հաշվեհամարին սահմանել 10 000 /տաս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող ՄԱԶ-555102-223 ինքնաթափ բեռնատարի վճարը մեկ մեքենա բեռ մինչև քսան կիլոմետր հեռավորություն տեղափոխելու համար սահմանել 5 000 /հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին և գլխավոր մասնագետ հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատարին վարորդների լրացուցիչ աշխատանքներ կատարելու համար վճարման հարցով առաջնորդվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

| | Կողմ՝ ...10 | Դեմ՝ ...0 | Ձեռնպահ՝ ...0 |
|---|---|---|---|
| ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ | | | |
| ԱՐՄԵՆՅԱՆ ԱՐՄԵՆ | բացակա | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ | | | |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ | | | |
| ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ | | | |
| ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ | բացակա | | |
| ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | | | |
| ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ | | | |
| ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ | բացակա | | |
| ՌԻՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ | բացակա | | |
| ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ | | | |
| ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ | բացակա | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հունվարի 24

Քաղաք Մարալիկ